

Զանգակի վրայ դիտելիք .

Զանգակը ծանօթ գործիք մըն է
ձայն հանօղ, պղնձէ աման մը բերանը
բաց, մէջն ալ երկրթէ լեզու մը՝ որ
բերին զարնելով ձայն կը հանէ: Պը-
ղընձէ որ կ'ըսենք՝ զուտ պղինձ չէ, այլ
բաղադրած. այսինքն քանի հոխա անագ
հարիւր հօխա պղնձի հետ խառնած. բեր-
նին հաստութիւնը հասարակօրէն իր
տրամադժին տասնընհինքին մէկն է. իսկ
բարձրութիւնը հաստութեանը տա-
սուերկուքը: Զանգակը կոչնակի տեղ
կը ծառայէ, և աս բանիս առջի ծա-
ռայեցրնողը եղած է սուրբ Պաւլինոս
եպիսկոպոս Նորայ քաղքին՝ որ Քամ-
փանիայի մէջն է. անոր համար եւրո-
պացիք զանգակին Քամփանա կ'ըսեն,
ու լատիներէն Նորա ալ կ'ըսուի :

Ովիգիոս, Տիբուլոս, Մարտիալէս,
Ստատիոս, Մանիլիոս, և անոնց ժա-
մանակակից հեղինակներ ալ կը յիշեն
զանգակը, բայց կ'երևնայ որ պղտի զան-
գակներու ու բոժոժմներու վրայ է խօս-
քերին. իսկ մեծ զանգակները վերջը
հնարած են, ինչպէս Հերոնիմոս Մա-
գիոս երկան ճառով կը ցուցընէ: Իրաւ-
ցընէ ալ մեծ զանգակներու յիշատակ
չենք գտնար Քրիստոսի 600 թուակա-
նէն առաջ: Կը պատմեն որ Լուպոս Յո-
լէանի եպիսկոպոսը 610 թուականին
Սանս քաղաքը գտնուելով՝ որ ան ա-
տենը կը տարիոս պաշարեր էր զօրքով,
սուրբ Ստեփանոսի ժամուն մեծ զան-
գակները զարնել տալով՝ սարսափե-
ցուց թշնամեաց զօրքը: Անգղիոյ մէջ
մեծ զանգակներու յիշատակը նոյն դա-
րուն վերջերը միայն կը գտնենք. իսկ
800-ն հասարակ եղած են մեծ զան-
գակները: Յունաց մէջ մինչև 900 թը-
ւականը անձանօթ էին, վենետիկցի
զանգակ թափող մը սորբեցուց իրենց:
Մեր մէջը անկէց առաջ ըլլալը՝ զան-
գակ օրէնելու կանոնէն յայտնի է, որ
Յովիչան Մանգակունւոյն շինածն է հին-
գերորդ դարուն. ու Անի քաղքին հա-

զարումէ կեկեղեցեաց բարձր զանգակա-
տուններ ունենալը կը վկայէ մեր Շնոր-
հալի Հայրապետը Եղեսիոյ ողբին մէջ.

« Ի բարձրութիւնն ելանէին
Ուր ըզզանգակսըն հընչէին »:

Իսկ փայտէ կոչնակները թէ Յունաց և
թէ մեր մէջը՝ Տաճկըններուն արևելք
տիրելէն ետքը մտան գերութեան ու-
րիշ չարաչար հետեւանքներուն հետ:

Ատենաք սգոյ նշան էր հասարակաց
տրտութեան ատեն զանգակ չղար-
նել, ինչպէս մինչև հիմայ ալ աւագ շա-
բաթուն Քրիստոսի չարչարանաց երկու
օրը, այսինքն աւագ հինգաբթիւն կէս-
օրուընէ ինչուան շարաթ կէսօր, քրիս-
տոնէից սովորութիւն է զանգակ չի-
զարնել: Բայց հոգևարաց համար զան-
գակ զարնելը հին սովորութիւն է, ա-
մենուն իմացընելու համար՝ որ աղօթք
ընեն:

Կայծակի ու կարկուտի վախ եղած ա-
տենն ալ սովորութիւն է զանգակ զար-
նել բարեպայտութեան համար, որպէս
զի Աստուած անոնց վասաներէն պահէ.
ինչպէս որ զանգակ օրէնելու կանոնին
մէջն ալ կ'աղօթենք. « Եւ այժմ, տէր
Աստուած մեր, առաքեա զշնորհս չո-
գույդ սրբոյ ՚ի նիւթ պղնձոյս յայս, զի
և սա մերձեսցի ՚ի սպաս պաշտաման
եկեղեցւոյ քում սրբոյ: Տուր տէր շը-
նորհս ձայնի աղդմանս այսորիկ, զի
յորժամ գումարեսցին ամազք ցատան
կարկտի, և լուկիցն մարդիկ զինչումն
սորա, յիշեսցեն զահեղ անուն քո՝
յորմէ սարսեն ամենայն արարածք, և
խնդրեսցեն ՚ի քէն զներումն յանցա-
նաց իւրեանց և զպահպանութիւն ան-
դաստանաց և ամենայն պտղոց. և դու-
լուիցես և ողորմեսցիս նոցա փոխանակ
հրամանի բարկութեան քո. քանզի սո-
վոր ես ՚ի ձեռն փոքունց սպասուց առ-
նել զքանչելիս մեծամեծս, որպէս կոր-
ծանեցեր զպարիսապն երկրովի ՚ի ձեռն
հնչման փողոյն եղջերեայս: ինչ որ սուրբ
Նարեկացին կոչնակին վրայ շինած հրա-
շալի աղօթքին մէջ անոր հոգեւորական
զօրութիւնները կը բացատրէ, ամենը

Ղանդակին վրայ ալ կ'իմացուի : Եւրոպա բարի սովորութիւն մըն ալ կայ՝ առառ կէսօր ու իրիկուն Քրիստոսի մարդեղութեանը խորհրդոյն յիշատակ՝ ղանդակ զարնել, ու քրիստոնեայք Հրեշտակ տեսան աղօթքը ան ատեն կը կատարեն : Նմանապէս իրիկուան արեք մտնալէն ժամ մը եռքը՝ ննջեցելց համար զանդակ կը զարնեն, ու հաւատացեալք ան ատենը ի խորոց կարդացի սաղմուը կ'ըսեն : Ուրբաթ օրերն ալ իրիկուան գէմ Քրիստոսի մահուանը յիշատակ շատ տեղ զանդակ կը զարնեն :

Զանդակ օրհնելու յիշատակը լատինացոց մէջ ալ ՚ի հնուց եղած պիտոր ըլլայ, թէ և որոշ յիշատակ ութերորդ գործէն առաջ չունին . Բնկ մեր մէջ հինչ գերորդ գարէն ունենալիս յայտնի է վերի ըսած օրհնութեան կանոնէս, որ Մանդակունացն շինած ըլլալը կը վըկայեն մեր հին զրչադիր մաշտոցները :

Մետաղներոց վրայ գիտելիք .

Մետաղը ծանը փայլուն ու պինդ հանք մըն է, որ Հրահալելի կ'ըսուի . վասն զի կրակով կը հալի ու հեղանիւթ՝ կ'ըլլայ, եռքը պաղելով՝ նորէն կը պըն զանայ: Մետաղին մէկ յատկութիւնն ալ ուռան տակը տափկիլն ու տարածուիլն է: Ուրիշ նիւթեր ամենեին աս յատկութիւնները չունին . ինչպէս զոհարեղիններն ու ուրիշ քարերը չեն հալիր կրակով, և ոչ ուռան տակը կը տարածուին . աղն ալ թէն կը հալի, բայց ուռան տակը կը փշրի, չիտարածուիր: Փայտեր կան որ մետաղի կարծրութիւն ունին, բայց կրակով մոխիր կը դառնան :

Ինչուան հիմայ եօթը տեսակ մետաղ միայն գտնուած է . այսինքն ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար ու անագ. եսքի ատեններս գտնուեցաւ եօթներորդն ալ որ է բլազին: Ութերորդ

մետաղ մըն ալ կրնայ սեպուիլ մնդիկը . բայց մետաղին յատկութիւնները չունի, վասն զի չկարծրանար, և ուսան տակ չինսար: Այսու ամենայնիւ որովհետև ծծումքի հետ խառնուելով՝ կը կարծրանայ, կրնայ մետաղներուն կարգը դրուել:

Մետաղներուն գլխաւոր յատկութիւնը՝ ուրիշ ամեն նիւթերէ ծանը ըլլանին է . իրենց ծանրութեանը կարգը աս է . ամենէն ծանրը՝ թլաղին .

Եռքը՝ Ոսկի .

— Մնդիկ .

— Կապար .

— Արծաթ .

— Պղինձ .

— Երկաթ .

— Անագ :

Ուրեմն ամենէն թեթեն է անազը, ամենէն ծանրը բլազինն ու ոսկին . Մետաղներէն ՚ի զատ ուրիշ նիւթ մը չկայ՝ որ բլազինին ու ոսկիին ծանրութեանը իրեքին մէկն ըլլայ . Չուրը ոսկիին ծանրութեանը գրեթէ չըրսին մէկն է: Ասկէց կը հետեւ ոսկի շինելուն անհնարին ըլլալը . վասն զի ոսկի շինելու համար ինչ նիւթ որ մէկը գործածել ուղէ, պէտք է որ ան նիւթին ծանրութիւնը եւելցընէ :

Մետաղներէն կերպ կերպ բաղադրութիւններ կ'ըլլուին . ինչպէս զանդակիներուն նիւթը պղինձէ ու անազէ խառնած է, 100 պղինձին՝ 20–23 անագ . նմանապէս արձաններուն ևուրիշ թափծու բաներուն պղինձը արուրի հետ խառնած է վերի ըսած չափովս :

Մետաղներուն մէջ ամենէն քիչ ժանդ բռնողը՝ բլազինն ու ոսկին է . մետաղները ժանդողը ջուրն ու թացութիւնն է . ինչ ժանդ որ ալ օդէն կ'առնեն՝ օդուն մէջը եղած ջրային մասնքներէն են, մանաւանդ թէ որ օդը աղի ըլլայ: Անոր համար չոր օդուն մէջ մետաղները քիչ կը ժանդուին . իսկ եղ կամ ձէթ վրանին քսելու որ ըլլաս, թացութենէ պահուելով՝ չին ժանդուիր:

Մետաղները թէն պարզ նիւթ մը